

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ԳՆ-ԾՀԾՁԲ-15/3-ՏԲ- 23**

ք. Երևան

<<22>> 02 2017 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Տնակցացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին՝ համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից ետոյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 100 000 ( հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ.:

### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն  
ք. Երևան, Կառավարական N 3 շենք  
ՀՀ Ֆինանսների նախարարության  
աշխատակազմի  
գործառնական վարչություն  
Հ/Հ 900011008266  
ՀՎՀՀ 02508046

Աշխատակազմի



*[Handwritten signature]*

### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ  
ՀՀ ք. Երևան, Մյասնիկյան 22/4  
«Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ  
Գավառի մ/ճ  
Հ/Հ 220083335012000  
ՀՎՀՀ 08417829  
Էլ. հասցեն՝ [m-bi-r@mail.ru](mailto:m-bi-r@mail.ru)  
Հեռ.՝ 5-85-50



Գրասարյան

*[Handwritten signature]*  
*[Handwritten signature]*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ/ԳՆԱՑՈՒՑԱԿ/-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1(տեխնիկական գնման /դիագնոստիկա/), SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

		Երևան քաղաքում
ՀՀ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների
		1 չափաբաժին
		4x4 տիպի ավտոմեքենաներ (Շեվրոլե Նիվա)
1	2	3
	<b>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</b>	ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ
1	Բենզինային համակարգի ստուգում	500
2	Սառեցման համակարգի ստուգում	500
3	Ցուղման համակարգի ստուգում	500
4	Արտացման համակարգի ստուգում	500
5	Կցորդման համակարգի ստուգում	500
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	500
7	<b>ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում</b>	
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	500
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	500
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	500
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	500
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	500
13	<b>ABS համակարգի ստուգում</b>	
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	500
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	500
16	Թափքի վիճակի ստուգում	500
17	Տարբեր ագրեզատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	500
	<b>SU-2 ներառվող ծառայությունների անվանում</b>	
18	Շարժիչի հանում և տեղադրում	16,000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	100
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
22	Շարժիչի վերանորոգում	16,000
23	Նույնը DOHC դեպքում	100
24	<b>Նույնը V6-ի դեպքում</b>	
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	3,200
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	3,200
27	Նույնը աջի համար (V6)	
28	Նույնը ձախի համար (V6)	
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	8,000
30	Նույնը աջի համար (V6)	
31	Նույնը ձախի համար (V6)	
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	8,000

33	Շարժիչի գլխիկվերանորոգում	16,000
34	Փականի խցուկի փոխարինում	1,600
35	Նույնը V6-ի դեպքում	
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	8,000
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	
38	Նույնը V6-ի աջի դեպքում	
39	Նույնը DOHC դեպքում	100
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	
41	Հրիչների փոխարինում SOHC	8,000
42	Նույնը DOHC դեպքում	100
43	Ատամնավոր փոկի փոխարինում	100
44	Նույնը DOHC դեպքում	100
45	Նույնը V6-ի դեպքում	
46	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	4,800
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
48	Նույնը DOHC դեպքում	100
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
50	Նույնը V6-ի դեպքում	
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	
52	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	3,200
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
54	Ախտաբանական օղակների փոխարինում	16,000
55	Նույնը DOHC դեպքում	100
56	Նույնը V6-ի դեպքում	
57	Թափանիվի հանում և տեղադրում	3,200
	<b>2. Ղեկավարման սեման և յուղման համակարգ</b>	
58	Ցուղի և յուղի զտիչի փոխարինում	3,200
59	Ցուղի պոմպի փոխարինում	3,200
60	Նույնը DOHC դեպքում	100
61	Նույնը V6-ի դեպքում	
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	1,600
63	Բռնկման կարգավորում	1,600
64	CO կարգավորում	1,600
65	Խարնաբակի հանում և տեղադրում	1,600
66	Խարնաբակի վերանորոգում	1,600
67	Օդի զտիչի փոխարինում	1,600
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	8,000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	12,800
70	Բենզամոլիչի փոխարինում	3,200
71	Վառելիքի զտիչի փոխարինում	3,200
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	3,200
73	Տրամյորի հանում և տեղադրում	1,600
74	Տրամյորի վերանորոգում	1,600
	<b>3. Աառեցման և արտածման համակարգ</b>	
75	Հովիարի փոկի հանում և տեղադրում	4,800
76	Հովիարի հանում և տեղադրում	4,800
77	Ռադիատորի հանում և տեղադրում	4,800
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
80	Ռադիատորի վերանորոգում	8,000
81	Թերմոստատի փոխարինում	4,800
82	Ջրի պոմպի փոխարինում	9,600
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
85	Ջրի պոմպի վերանորոգում	1,600

86	Նույնը DOHC դեպքում	100
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
88	Ընդարձակող բացի փոխարինում	1,600
89	Խլարարի հանում և տեղադրում	4,800
90	Նույնը DOHC դեպքում	100
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1,600
	<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>	
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	3,200
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	3,200
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	9,600
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1,600
96	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում	100
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	16,000
98	ՓՏ-ի վերանորոգում	16,000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1,600
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	1,600
101	Վազքաչափի շարժաբեղի փոխարինում	1,600
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	
104	Նույնը V6-ի համար	
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	
106	Նույնը V6-ի համար	
107	ԱՓՏ-ի վերանորոգում	
108	Նույնը V6-ի համար	
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>	
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	3,200
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	4,800
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	3,200
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	3,200
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	16,000
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	16,000
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	8,000
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում	4,800
121	Կիսատնու առանցքակալի փոխարինում	3,200
	<b>7. Կախոց</b>	
122	Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում	16,000
123	Տրավերսի հանում և տեղադրում	1,600
124	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում	
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	6,400
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	100
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	
129	Ձախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում	

130	Ձախ կամ այլ հողակապի առանցքակալների փոխարինում	4,800
131	Տնցամեղմիչի թասակի փոխարինում	160
132	Չսպանակի հանում և տեղադրում	4,800
133	Չսպանի հանում և տեղադրում	4,800
134	Չսպանի վրանների փոխարինում	8,000
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	3,200
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	4,800
137	Ներքևի լծակի վրանների փոխարինում	1,600
138	Առջևի այլ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	3,200
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	3,200
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	3,200
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	4,800
142	Վերևի լծակի վրանների փոխարինում	1,600
143	Գնդե հողակապերի փոխարինում	3,200
144	Ծայրակների հանում և տեղադրում	3,200
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	4,800
146	Առջևի կայունարարի վրանների փոխարինում	3,200
147	Առջևի կայունարարի առջևի վրանների փոխարինում	
148	Հետևի զսպանակի փոխարինում	4,800
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	3,200
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	800
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	800
152	Կայունարարի կանցնակների հանում և տեղադրում	1,600
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	-
154	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում	-
155	Անվաթաքքի կարագավորում	7,000
156	Ջողման փխստանքներ 1 քառ.սմ համար	500
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>	
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում	8,000
158	Նույնը V6-ի համար	
159	Ղեկային կալունի վերանորոգում	4,800
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վրանների փոխարինում	1,600
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	3,200
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	4,800
163	Նույնը DOHC դեպքում	100
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	3,200
165	Նույնը DOHC դեպքում	100
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	3,200
167	Նույնը DOHC դեպքում	100
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	100
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	100
	<b>9. Արգելակային համակարգ</b>	
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3,200
172	Գլխ. գլանի վերանորոգում	3,200
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	3,200
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	3,200
175	Բանվ. գլանի վերանորոգում	1,600
176	Արգելակային համակարգի օրահանում	1,600
177	Առջևի ստապորտի հանում և տեղադրում	3,200
178	Հետևի ստապորտի հանում և տեղադրում	100
179	Առջևի ստապորտի վերանորոգում	3,200
180	Հետևի ստապորտի վերանորոգում	
181	Արգելակային փողրակի փոխարինում	3,200

182	Աղջկի արգելակային կոճղակների փոխարինում	3,200
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	
184	Հետևի կոճղակների փոխարինում	3,200
185	Աղջկի արգելակային սկավառակի փոխարինում	3,200
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	1,600
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1,600
188	ABS-ի հանում և տեղադրում	
189	ABS-ի վերանորոգում	
190	Ձեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում	3,200
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	1,600
	<b>10. Էլեկտրասարքավորում</b>	
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	12,800
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	3,200
194	Գնենքատորի հանում և տեղադրում	3,200
195	Նույնը V6-ի դեպքում	
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	100
197	Գնենքատորի վերանորոգում	4,800
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	3,200
199	Մեկնարկիչի վերանորոգում	4,800
200	Աղջկի լապտերի հանում և տեղադրում	3,200
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	3,200
202	Բռնկման կողպեցիի հանում և տեղադրում	4,800
203	Վազքաչափի հանում և տեղադրում	3,200
204	Վազքաչափի ճուպանի հանում և տեղադրում	3,200
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	12,800
206	Արագաչափի հանում և տեղադրում	3,200
207	Ազդանշանի հանում և տեղադրում	1,600
208	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	8,000
209	Դռների կենտրոնական փակման հանում և տեղադրում	3,200
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	12,800
211	Մագնիստոլայի տեղադրում	4,800
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1,600
213	Էլ/հաղորդյալարերի մասնակի վերանորոգում	1,600
214	Էլ/հաղորդյալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	16,000
215	Էլ/հաղորդյալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	8,000
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	1,600
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1,600
218	Վառոցքի մոմերի փոխարինում	3,200
219	Կոնդիցիոների լիցքավորում	24,000
220	Կոնդիցիոների վերանորոգում	12,800
	<b>11. Այլ ծառայություններ</b>	
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	1,600
222	Ավտոմեքենայի լվացում	1,600
223	Անիվի հանում և տեղադրում	1,600
224	Անվաղողի վերանորոգում	1,600
225	Անիվի բայանսավորում	1,600
226	Անիվի վալց	1,600
227	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	480
228	Խառատային աշխատանքներ	1,600
229	Փականագործի աշխատանքներ	1,600
230	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	500

	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայքայողների և այլ օժանդակ նյութերի անվանումները	4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա)
	1. Շարժիչ	ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ
1	Շարժիչի բլոկ	32,000
2	Շարժիչի գլխիկ	64,000
3	Բարձիկ	4,800
4	Շարժիչի գլխիկի միջադիր	4,000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	100
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	32,000
7	Շարժիչի փական դուրս մղող	4,800
8	Շարժիչի փական ներս մղող	4,800
9	Շարժիչի փականի խցուկ	480
10	Ծնկածն լիսեռ	32,000
11	Ծնկածն լիսեռի խցուկ առջևի	1,600
12	Ծնկածն լիսեռի խցուկ հետևի	1,600
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	4,800
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	4,800
15	Հենակային տափուղակ	400
16	Մխոց	6,400
17	Մխոցային օղակներ	19,200
18	Ատամնանիվ	3,200
19	Ատամնավոր փոկ	100
20	Շղթա	9,600
21	Հիդրոձգան	16,000
22	Հրիչ	1,600
23	Հիդրոհրիչ	9,600
24	Բաշմակ	4,800
25	Հանգստորար	4,800
26	Թափանիվ	32,000
27	Թափանիվի պսակ	9,600
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	1,600
29	Շկիվ	32,000
30	Շարժաթև	9,600
31	Կարտերի միջադիր	3,200
32	Միջադիր	1,600
	<b>2. Ղեկավարման, սեման և յուղման համակարգ</b>	
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	3,000
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	5,000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	6,000
36	Յուղի գտիչ	3,200
37	Յուղի պոմպ	16,000
38	Յուղի պոմպի շարժաբեր	3,200
39	Յուղի ռադիատոր	1,600
40	Յուղի փողրակ	1,600
41	Յուղի ծորակ	800
42	Վառոցքի մոմ	1,600
43	Բենզոլաջ	12,800
44	Խառնարակ	12,800
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	6,400
46	Ինժեկտորի ֆորսունկա	19,200
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	32,000
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	12,800
49	Վառելանյութի գտիչ	6,400
50	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	1,600
51	Վառելանյութի փողրակ	3,200

52	Աքսելերատորի ճուլան	4,800
53	Օդի զտիչ	6,400
54	Ջերմաստիճանային տվիչ	100
55	Յուղի տվիչ	4,800
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	9,600
57	Օդի ծախսի տվիչ	19,200
58	Արագաչափի տվիչ	9,600
59	Հովհարի տվիչ	4,800
60	Ջրի տվիչ	4,800
61	Բենզոլրացի տվիչ	9,600
62	Մարման ընթացքի կարգավորիչ	1,600
63	Մարման ընթացքի տվիչ	100
64	Ղեկավարման համակարգիչ	19,200
65	Պարապ ընթացքի տվիչ	9,600
66	Դրոսելային փականի տվիչ	8,000
67	Թթվածնի տվիչ	19,200
	<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>	
68	Հովհարի փոկ	3,200
69	Հովհար	16,000
70	Ռադիատոր	72,000
71	Շնդարձակող բաց	4,800
72	Ռադիատորի փողոցակ	3,200
73	Թերմոստատ	8,000
74	Ջրի պոմպ	24,000
75	Ջրի պոմպի առանցքակալ	1,600
76	Ջրի պոմպի թևակ	1,600
77	Սառեցման հեղուկ լիտր	3,000
78	Ջրի պոմպի սոնանիվ	800
79	Հողմակ	8,000
80	Փոկ	12,800
81	Փոկ կոնդիցիոների	1,600
82	Ծորակ	4,800
83	Խլարարի ներդիր	800
84	Խլարարի կախոց	800
85	Կրոնշտեյն	800
86	Անոթ (խամուտ)	800
87	Խլարար	24,000
88	Ռեզոնատոր	1,600
89	Վառարանի ռադիատոր	19,200
	<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>	
90	Կցորդման բանվորական զլան	9,600
91	Կցորդման զլանավոր զլան	12,800
92	Կցորդման զլանի վերանորոգման հավաքածու	1,600
93	Կցորդման տանող սկավառակ	40,000
94	Կցորդման տարվող սկավառակ	19,200
95	Կցորդման առանցքակալ	8,000
96	Կցորդման փողոցակ	4,800
97	Փոխանցման տուփ	64,000
98	ՓՏ-ի առջևի խցուկ	1,600
99	ՓՏ-ի հետևի խցուկ	1,600
100	ՓՏ-ի առանցքակալ	6,400
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	100
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	9,600
103	ՓՏ-ի եղանիվ	8,000
104	ՓՏ-ի ատամնանիվ	9,600

105	Համաժամիչ	6,400
106	Մուֆտ	19,200
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1,600
108	ԱՓՏ-ի զուիչ	
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	3,000
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	19,200
114	Հերմետիկ	1,600
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>	
115	Բաշխիչ տուփ	1,600
116	Բաշխիչ տուփի խցուկ	1,600
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	6,400
118	Բաշխիչ տուփի առամնանիվ	19,200
119	Բաշխիչ տուփի լիսեռ	19,200
120	Կարդանային լիսեռ	88,000
121	Էլաստիկ մուֆտ	6,400
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	6,400
123	Կարդանային լիսեռի խաչուկ	11,200
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
124	Հետևի կամ առջևի կամրջակ	40,000
125	<i>Ռեզոնկտոր</i>	
126	Գլխավոր փոխանցման առամնանիվների կոմպլեկտ	80,000
127	Դիֆֆերենցիալ	16,000
128	Դիֆֆերենցիալի սնտեյլիտ	8,000
129	Տանող առամնանիվի խցուկ	1,600
130	Տանող նառամնանիվի առանցքակալ	6,400
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	6,400
132	Կիսատնուի	28,800
133	Կիսատնու առանցքակալ	6,400
134	Կիսատնու միջադիր	800
135	Կիսատնու խցուկ	1,600
136	Կարգավորիչ տափոզակ	800
	<b>7. Կախոց</b>	
137	Տրավերս	16,000
138	Կրոնշտեյն	3,200
139	Ձախ կամ աջ հողակապ	
140	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	
141	Անվակունդ	
142	Անվակունդի խցուկ	
143	Անվակունդի ներքին առանցքակալ	4,800
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	4,800
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	
147	Ձախ կամ աջ հողակապի խցուկ	1,600
148	Հարվածամեղմիչի թասակ	100
149	Զսպանակ	12,800
150	Առջևի հարվածամեղմիչ	16,000
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	800
152	Հարվածամեղմիչի վրան	800
153	Ներքևի լծակ	16,000
154	Ներքևի լծակի վրան	3,200
155	Վերևի լծակ	16,000
156	Վերևի լծակի վրան	3,200

157	Գնդե հողակապ	11,200
158	Առջևի կայունարար	16,000
159	Առջևի կայունարարի վրան	800
160	Առջևի կայունարարի առջևի վրան	100
161	Հետևի զսպանակ	8,000
162	Հետևի ցեցամեղմիչ	16,000
163	Հետևի մետաղածող (շտանգա)	4,800
164	Հետևի մետաղածողի (շտանգա) վրան	800
165	Հետևի անկյունագծային լծակ	1,600
166	Անկյունագծային լծակի վրան	800
167	Զսպակ (ռեստորա)	8,000
168	Զսպակի վրան	800
169	Զսպակի միջադիր	800
170	Զսպակի բռնիչ	3,200
171	Աջ կամ ձախ ձգան	6,400
172	Ծայրակալ	6,400
173	Ձգան մեջտեղի	8,000
174	Անվահեծ	16,000
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>	
175	Ղեկային կայուն	64,000
176	Ղեկային կայունի առանցքակալ	3,200
177	Ղեկային կայունի խաչուկ	3,200
178	Հիդրոուժեղարար	100
179	Հիդրոուժեղարարի փոկ	100
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	100
181	Հիդրոուժեղարարի պոմպ	100
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	100
183	Ղեկային ծող	4,800
184	Ղեկային ծողի ծայրակալ	1,600
185	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	100
186	Ճոճանակ	14,400
187	Ճոճանակի վրան	1,600
	<b>7. Արգելակային համակարգ</b>	
188	Գլխ. գլան	24,000
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1,600
190	Վակուումային ուժեղարար	32,000
191	Բանվ. գլան	4,800
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1,600
193	Արգելակային փողրակ	3,200
194	Սուպպորտի ուղղորդիչ	1,600
195	Սուպպորտի մանժետ	800
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	24,000
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	11,200
199	Առջևի արգելակային սկավառակ	11,200
200	Հետևի արգելակային սկավառակ	11,200
201	Ձեռքի արգելակի ճուպան	8,000
202	ABS-ի տվիչ	1,600
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	1,000
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2,000
205	Ձեռքի արգելակի ճուպան	100
	<b>9. Էլեկտրասարքավորում</b>	
206	Գններատոր	56,000

207	Գներատորի դիոդային կամրջակ	14,400
208	Գներատորի ռելե	8,000
209	Գներատորի առանցքակալ	3,200
210	Ստարտեր	48,000
211	Ստարտերի ռելե	3,200
212	Ստարտերի ածուխ	1,600
213	Բենդեքս	12,800
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	14,400
215	Առջևի լապտեր	8,000
216	Առջևի թարթիչ	3,200
217	Հետևի լապտեր	3,200
218	Հետևի թարթիչ	100
219	Արգելակային լապտեր	3,200
220	Լամպ	1,600
221	Էլեկտրական անջատիչ	4,800
222	Էլեկտրական տվիչ	4,800
223	Էլեկտրական չափիչ սարք	1,600
224	Բռնկման կողպեք	8,000
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	8,000
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	4,800
227	Վառոցային լարերի խուրց	8,000
228	Վառոցքի մոմի ծայրակալ	1,600
229	Վազբաչափ	4,800
230	Վազբաչափի ճոյան	4,800
231	Արագաչափ	4,800
232	Ազդանշան	4,800
233	Ապակեվազիչ	3,200
234	Ապակեվազիչի շարժիչ	8,000
235	Դռների կենտրոնական փական	4,800
236	Ազդանշային համակարգ	8,000
237	Մագնիտոլա	8,000
238	Էլեկտրաամբարձիչ	8,000
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	8,000
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	500
<b>Ծառայության մատուցման ժամկետը</b>		
<b>Գնումը կկատարվի ըստ անհրաժեշտության մինչև 20.12.2017թ.</b>		
<b>Սկիզբը</b>		<b>ավարտը</b>
<b>Պայմանագիրը կնքելու օրը</b>		<b>2017 թվականի դեկտեմբերի 20-ը</b>

\* Մզեցված վանդակները ծառայության տեսակ չեն համարվում

\* Պարբերադիր պայման. Տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**


«Վոլտատեխ» ընկերության նախարարություն  
 ք. Երևան, Կառավարական N 3 շենք  
 «Ֆինանսների նախարարության  
 աշխատակազմի  
 գործառնական վարչություն  
 Հ/Հ 90004008266



Արտագրողի ստորագրություն

**Կ Ա Տ Ա Ր ՈՂ**

«Մ-Բ-Ռ» ՍՊԸ  
 «Վ. Երևան, Մյասնիկյան 22/4  
 «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ  
 Գավառի մ/6  
 Հ/Հ 220083335012000  
 ՀՎՀՀ 08417829  
 էլ. հասցեն՝ m-bi-r@mail.ru  
 հեռ. 099 223 33 50



Արտագրողի ստորագրություն

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝

Իրականացվող ծրագիրը՝ 02. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Բաժին 04, խումբ 02, դաս 01

« Դրամ

N	Ծառայության անվանումը	Հոդված	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդ-ամեն և Տարի	
1.	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ	4252			20 000	30 000	50 000	70 000	80 000	90 000	100 000	100 000	100 000	100 000	100 000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:


**Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ**

« Գյուղատնտեսության նախարարություն  
 ք. Երևան, Կառավարական N 3 շենք  
 « Գնանանների Նախարարության  
 աշխատակազմի  
 գործառնական վարչություն  
 Հ/Կ 900011000200  
 Հ/Կ 02500400  
 Աշխատակազմի ղեկավար



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ  
 ՀՀ ք. Երևան, Մյասնիկյան 22/4  
 «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ  
 Գավառի մ/6  
 Հ/Կ 220083335012000  
 Հ/Կ 08417829  
 էլ. հասցեն՝ m-bi-r@mail.ru  
 հեռ. հասցեն՝ 010 500 500



Բաղնիքի ղեկավար

Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
 ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով

Պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

**ԱԿՏ N**

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ -----ի (այսուհետ՝ Պատվիրատու)

և

-----ի (Պատվիրատուի անունը)  
 -----ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ----- -ին կնքված N -----  
 (Կատարողի անունը)  
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----- -- -ին հանձնման-  
 ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն